Գրոլեսարներ բոլոր յերկրների, միացեք

ԽՍՀՄ ԱՆՏԱՌՄԹԵՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԽՍՀ Միության ժողովրդական Կոմիսարների
Խորհրդի և ՀԱՄԿ (բ) Կ Կենտրոնական Կոմիտեյի
Վորոշումը

634.9
Ա-11

ՊԵՏՀՐԱՏ 1939 ՅԵՐԵՎԱՆ

639.9
Կ-11

30 JUL 2010

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք!

ԽՍՀՄ ԱՆՏԱՌՄԹԵՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՅԵՎ ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

ՊԵՏՀՐԱՏ 1939 ՅԵՐԵՎԱՆ

11.11.09.20
20433

16649-58

ОБ УЛУЧШЕНИИ РАБОТЫ ЛЕСОЗАГОТОВИТЕЛЬНОЙ ПРОМИШЛЕННОСТИ СССР

Անտառամթերման կազմակերպությունների աշխատանքը բարելավելու նպատակով ԽՍՀ Միության ժողովրդական կոմիսարների Խորհուրդը և Համկ(բ)կ կենտրոնական կոմիտեն վորոշում են.

I. ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Աշխատանքի վարձատրման սիստեմի և արտադրանքի նորմաների մեջ մտցնել հետևյալ բարելավումները և փոփոխությունները, փոխացած բաներում պահպանելով արտադրանքի գոյություն ունեցող նորմաները, նորմավորման և աշխատանքի վարձատրման կարգը։

ԱՆՏԱՌԱՀԱՏՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՄԱՆ ԳԾՈՎ

1. Բարձրացնել անտառահատի որական հաշվարկային դրույքը.

Հեռավոր Արևելքում (բացի Սախալինից)	8 ռ. 70	կոպեկից	մինչև	9 ռ. 50 կ.
Կարելական ԱԽՍՀ հյուսիսային ռայոններում	7 ռ. 90	»	»	9 ռ. 10 կ.
Կարելական ԱԽՍՀ հարավային ռայոններում .	7 ռ. 30	»	»	8 ռ. 20 կ.
Արխանգելսկի մարզի հյուսիսային ռայոններում	8 ռ. 05	»	»	9 ռ. 00 կ
Արխանգելսկի մարզի հարավային ռայոններում .	7 ռ. 50	»	»	8 ռ. 50 կ.

Սվերդլովի մարզում	7 ռ. 60 կոպեկից	մինչև	8 ռ. 50 կ.
Կոմի ԱՍՍՀ-ում	7 ռ. 65	»	» 8 ռ. 50 կ.
Վոլոգդայի մարզում	7 ռ. 25	»	» 8 ռ. 20 կ.
Պերմի մարզում	6 ռ. 80	»	» 7 ռ. 50 կ.
Լենինգրադի մարզում	6 ռ. 25	»	» 7 ռ. 20 կ.
Գորկու մարզում	6 ռ. 00	»	» 6 ռ. 80 կ.
Մոսկվայի մարզում	6 ռ. 00	»	» 6 ռ. 80 կ.

Անտառահատների համար, գործածական փայտանյութ և փայտ մթերելու, այդ թվում նաև վոստաֆայտերը կիզելու բոլոր աշխատանքներում, մացնել մեկ տարիֆային դրույք։

ԽՍՀՄ Անտառժողկոմատին՝ առաջարկություններ ներկայացնել ԽՍՀ Միության Ժողկոմխորհին կից Տնտխորհրդի հաստատությանը՝ մնացած անտառամթերման ռայոնների անտառահատների հաշվարկային դրույքների մասին, հաշվի առնելով այդ ռայոնների առանձնահատկությունները։

2. Ի փոխոխություն գոյություն ունեցող կարգի, գործավարձային-պրոգրեսիվ աշխատավարձը հաշվել մեկուկես չափով և վճարել գերակատարած մասի համար, յերբ անտառահատը կես ամսվա ընթացքում գերակատարած լինի 12 նորմա, և յեթե նույնիսկ այդ նորմաներն այդ կես ամսվա ընթացքում կատարված լինեն ավելի քիչ աշխատանքային որերում։

3. Բացի գնահատումներից և աշխատանքի գործավարձային—պրոգրեսիվ վարձատրությունից, սահմանել լրացուցիչ սեզոնային պարգև—հավելում՝ հետևյալ չափերով.

ա) աշնան-ձմեռային անտառամթերման սեզոնում կամ ամառային անտառամթերումների ժամանակ արտադրանքի 40-որյա նորմա կատարած անտառահատը, արտադրանքի 40-որյա նորման կատարելուց հետո, պարգև-հավելում և ստանում ըստ հիմնական (առանց պրոգրեսիվ հավելման) գործավարձային գնահատումների տրված աշխատավարձի 50 տոկոսի չափով.

բ) սեզոնի ընթացքում 40 նորմայի արտադրանքից ավելին կատարող անտառահատը, արտադրանքի 40 նորմայից ավելի և մինչև 60 նորմա գերակատարած մասի համար ստանում և պարգև-հավելում՝ արտադրանքի 40 նորմայից ավելի կատարելու համար նրան հասանելիք հիմնական աշխատավարձի 80 տոկոսի չափով.

գ) սեզոնի ընթացքում 60 նորմայի արտադրանքից ավելին կատարող անտառահատը, արտադրանքի 60 նորմայից ավելի և մինչև 80 նորմա գերակատարած մասի համար ստանում և պարգև-հավելում՝ արտադրանքի 60 նորմայից ավելի կատարելու համար նրան հասանելիք հիմնական աշխատավարձի 120 տոկոսի չափով.

դ) սեզոնի ընթացքում 80 նորմայի արտադրանքից ավելին կատարող անտառահատը, 80 նորմայի արտադրանքից ավելի գերակատարած մասի համար ստանում և պարգև-հավելում՝ արտադրանքի 80 նորմայից ավելին կատարելու համար նրան հասանելիք հիմնական աշխատավարձի 150 տոկոսի չափով։

4. Անտառանյութի մթերման գոյություն ունեցող արտադրանքի նորմաների մեջ թույլ տրված խեղաթյուրումները լիկվիդացիայի յենթարկելու համար, առաջին խմբի ծառատեսակների (սոճի, բարդի, լորի)

վառելափայտի գերաններ մթերելու 7 խորանարդ մետր դիմադրկված նորմայի փոխարեն սահմանել արտադրանքի հետևյալ նորմաները։

Ծառի հաստությունը	Արտադրանքի նորման
11-ից մինչև 15 սանտիմետր . . .	5,2 խոր. մետր։
16-ից » 23 »	9,2 » »
24-ից » 31 »	10,7 » »
32-ից ավելի	11,5 » »

5. Անտառափայտը բարակ գերաններով մթերելու և փայտատար տրաստաների մոտ դարսելու արտադրանքի բարձրացված նորմաները շտկելու համար, յերբ փոխադրումը մեքենացված է, առաջին խմբի ծառատեսակների բարակ գերաններով անտառափայտ մթերելու համար սահմանել։

Անտառափայտը բարակ գերաններով մթերելու համար։—

Ծառի հաստությունը	Արտադրանքի նորման
20 սանտիմետր . . .	34 բարակ գերան 40-ի փոխարեն
28 »	23 » » 26-ի »
36 »	14 » » 17-ի »

Բարակ գերանները դասավորելու համար

Ծառի հաստությունը	Արտադրանքի նորման
11-ից մինչև 15 սանտիմետր	16 խորանարդ մետր 22-ի փոխարեն
16-ից » 23 » .	21 » » 30-ի »
24-ից » 31 » .	30 » » 40-ի »
32 և ավելի » .	37 » » 50-ի »

6. ԽՍՀՄ Անտառժողկոմատին՝ 4-րդ և 5-րդ կետերի համաձայն, բարակ գերանների և վառելափայտի գերանների մթերման արտադրանքի նորմաներ սահմանել մյուս խմբի ծառատեսակների համար։

7. Փայտանյութի թանգարժեք սորտիմենտների ստացումն ավելացնելու նպատակով, ֆաների, լուցկու և կոճի պատրաստման ծառայող գերանների, ինչպես նաև գումակային շինվածքների ծառայող գերանների մթերման արտադրանքի գոյություն ունեցող նորմաների փոխարեն սահմանել արտադրանքի հետևյալ որակական նորմաները։

ա) սոճու, բարդու և լորու համար։—մինչև մեկ մետր յերկարության գերաններ—արտադրանքի նորման 3 խորանարդ մետր, մինչև 2 մետր յերկարության գերաններ 4 խորանարդ մետր, 2 մետրից ավելի յերկարության գերաններ 5,5 խորանարդ մետր։

բ) կեչու, յեղևնու, լաստենու և սաղարթավորների համար,—մինչև մեկ մետր յերկարության գերաններ—արտադրանքի նորման 2,2 խորանարդ մետր, մինչև 2 մետր յերկարության—3 խորանարդ մետր, 2 մետրից ավելի յերկարության—4 խորանարդ մետր։

ՔԱՇՈՂՆԵՐԻ ՅԵՎ ՍԱՅԼԱՊԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ

8. Քաշողների (трелевщик) համար, բացի հիմնական գնահատականներից և պրոգրեսիվ հավելումից, սահմանել տեղական լրացուցիչ պարգև-հավելումներ հետևյալ չափերով։

ա) Աշնան-ձմեռային անտառամթերման տեղում կամ ամառային անտառամթերումների շրջանում արտադրանքի 40-որակական նորմա կատարած

քաշողը, արտադրանքի 40 որական նորման կատարելուց հետո ստանում է պարգև-հավելում՝ հիմնական (առանց պրոգրեսիվ հավելման) գործավարձային գնահատումների տրված աշխատավարձի 40 տոկոսի չափով։

բ) սեզոնի ընթացքում արտադրանքի 40 նորմայից ավելի կատարած քաշողը, արտադրանքի 40 նորմայից ավելի և մինչև 60 նորմա գերակատարած մասի համար ստանում է պարգև-հավելում՝ արտադրանքի 40 նորմայից ավելի կատարելու համար նրան հասանելիք աշխատավարձի 70 տոկոսի չափով։

գ) սեզոնի ընթացքում արտադրանքի 60 նորմայից ավելի կատարած քաշողը, արտադրանքի 60 նորմայից ավելի և մինչև 80 նորմա գերակատարած մասի համար ստանում է պարգև-հավելում՝ արտադրանքի 60 նորմայից ավելի կատարելու համար նրան հասանելիք աշխատավարձի 100 տոկոսի չափով։

դ) սեզոնի ընթացքում արտադրանքի 80 նորմայից ավելի կատարած քաշողը, արտադրանքի 80 նորմայից ավելի գերակատարած մասի համար ստանում է պարգև-հավելում՝ արտադրանքի 80 նորմայից ավելի կատարելու համար նրան հասանելիք աշխատավարձի 120 տոկոսի չափով։

9. Փայտանյութը կարճ տարածության վրա ձիով քաշելու գործում յեղած արտադրանքի սխալ նորմաները վերացնելու համար, իջեցնել ձիով քաշելու նորմաները ձմռան ժամանակ։

Տարածությունը	Արտադրանքի նորման
մինչև 50 մետր . .	28 խորանարդ մետր 26-ի փոխարեն
» 100 » . .	18 » » 20-ի »
» 150 » . .	14 » » 17-ի »

10. Անտառանյութ փոխադրող սայլապանների համար սահմանել հետևյալ սեզոնային պարգև-հավելումները։

ա) աշնան-ձմեռային անտառամթերման սեզոնում կամ ամառային անտառամթերումների ժամանակ արտադրանքի 40 որական նորմա կատարած սայլապանը, արտադրանքի 40 որական նորման կատարելուց հետո ստանում է պարգև-հավելում՝ հիմնական (առանց պրոգրեսիվ հավելման) գործավարձային գնահատումների տրված աշխատավարձի 30 տոկոսի չափով։

բ) սեզոնի ընթացքում արտադրանքի 40 նորմայից ավելի կատարած սայլապանը, արտադրանքի 40 նորմայից ավելի և մինչև 60 նորմա գերակատարած մասի համար ստանում է պարգև-հավելում՝ արտադրանքի 40 նորմայից ավելի կատարելու համար հասանելիք հիմնական աշխատավարձի 60 տոկոսի չափով։

գ) սեզոնի ընթացքում արտադրանքի 60 նորմայից ավելի կատարած սայլապանը, արտադրանքի 60 նորմայից ավելի և մինչև 80 նորմա գերակատարած մասի համար ստանում է պարգև-հավելում՝ արտադրանքի 60 նորմայից ավելի կատարելու համար նրան հասանելիք հիմնական աշխատավարձի 80 տոկոսի չափով։

դ) սեզոնի ընթացքում արտադրանքի 80 նորմա-

յից ավելի կատարած սայլապանը, արտադրանքի 80 նորմայից ավելի գերակատարած մասի համար ստանում է սեզոնային պարգև-հավելում՝ արտադրանքի 80 նորմայից ավելի կատարելու համար նրան հասանելիք հիմնական աշխատավարձի 100 տոկոսի չափով։

11. Քաշողին և սայլապանին տրվելիք պարգևհավելումը հաշվել միայն անմիջական քաշողի և սայլապանի աշխատավարձի գումարի վրա։

12. Ի փոփոխություն գոյություն ունեցող կարգի, քաշողների և սայլապանների գործավարձային-պրոգրեսիվ աշխատավարձը հաշվել մեկուկես չափով և վճարել գերակատարած մասի համար, պայմանով, որ կես ամսվա ընթացքում կատարված լինի 12 նորմա, յեթե նույնիսկ այդ նորմաներն այդ կես ամսվա ընթացքում կատարված լինեն ավելի քիչ աշխատանքային որերում։

13. Սայլապանի աշխատանքը, յեթե նա յերկու ձիով աշխատեցնում է յերկու լծասարք, վճարել մեկուկես դրույքի հաշվով, իսկ յերեք ձիով աշխատելիս՝ յերկու դրույքի հաշվով։

14. Տրակտորային սահնակները բեռնաթափող բեռնակրի արտադրանքի իջեցված նորմաները շտկելու համար որական նորման 20-ից բարձրացնել 24 խորանարդ մետրի։

15. Մանևրա կատարող տրակտորիստներին, յերբ նրանք արտադրանքի նորման կատարեն, բացի հիմնական աշխատավարձից և պրոգրեսիվ հավելումից, վճարել պարգև՝ գծային տրակտորիստների (որոնց նրանք սպասարկում են) պրոգրեսիվ հավելման գումարի 10 տոկոսի չափով։

ՎԱՐՊԵՏՆԵՐԻ ՅԵՎ ԻՆԺԵՆԵՐ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՄԱՆ ԳԾՈՎ

Գոյություն ունեցածի փոխարեն սահմանել անտառարդյունաբերությունների և մեքենացված անտառակեսերի (лесопункт) վարպետների և ինժեներա-տեխնիկական աշխատողների պարգևատրման հետևյալ կարգը։

16. Այն վարպետը, որը կատարել է իր արտադրական տեղամասի ամսական պլանը, ամեն ամիս, բացի աշխատավարձից, ստանում է պարգև-հավելում՝ մթերված ու դարսված (կամ մթերված ու փոխադրված՝ որտեղ դարսում չկա) փայտանյութի յուրաքանչյուր 100 խորանարդ մետրի համար 10 ռուբլու չափով, և լրացուցիչ պարգև-հավելում՝ պլանից ավելի գերակատարված յուրաքանչյուր 100 խորանարդ մետրին 20-ական ռուբլի։

Վարպետը, աշնան-ձմեռային անտառամթերումների ամբողջ պլանը կատարելու համար, բացի վերոհիշյալ պարգև-հավելումներից, ստանում է սեզոնային պարգև՝ յերկու ամսվա աշխատավարձի չափով։

ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1937 թվի սեպտեմբերի 29-ի վորոշումը՝ ինժեներների և տեխնիկների յերկարատև ծառայության հավելումների մասին—տարածել նաև վարպետ պրակտիկների վրա։

17. Բարձրացնել առաջին կատեգորիայի ընդունող-խոտանողի ամսական դրույքը 250 ռուբլուց մին-

չև 300 ռուբլի, յերկրորդ կատեգորիայի ընդունող—խոտանողինը՝ 200 ռուբլուց մինչև 250 ռուբլի և յերրորդ կարգի ընդունող-խոտանողինը՝ 150 ռուբլուց մինչև 200 ռուբլի, վորպիսին ԽՍՀՄ Անտառժողկոմատը սահմանել է յերկրորդ գոտու վարպետներին և ընդունող-խոտանողներին վարձատրելու համար։

ԽՍՀՄ Անտառժողկոմատին՝ դրա համաձայն սահմանել մյուս գոտիների ընդունող-խոտանողների ամսական աշխատավարձը։

18. Անտառկետի, անտառարդտնտեսության և մեքենացված անտառակետի ձիաքարշ դումակի վարիչը, քաշելու և փոխադրման ամսական պլանը կատարելու և ձիերը լավ խնամելու—պահպանելու դեպքում, ստանում է պարգև՝ իր ամսական աշխատավարձի 30 տոկոսի չափով։

Քաշելու և փոխադրման պլանը գերակատարելու համար դումակի վարիչը պլանի գերակատարման յուրաքանչյուր տոկոսի համար ստանում է լրացուցիչ պարգև՝ իր ամսական աշխատավարձի յերեք տոկոսի չափով։

19. Ճանապարհային վարպետը, տվյալ ճանապարհով փոխադրման ամսական պլանը կատարվելու և ճանապարհը լավ վիճակում պահպանելու դեպքում, բացի իր աշխատավարձից, ստանում է պարգև՝ տվյալ ճանապարհով փոխադրված յուրաքանչյուր 1000 խորանարդ մետր փայտանյութի համար 10 ռուբլու չափով։

20. Ավտոտրակտորային և ռելսային ճանապարհների յերթևեկության հերթապահը, իր հերթափոխում ամսական գրաֆիկի և անտառանյութի փոխադրման

ամսական պլանը կատարելու համար ստանում է պարգև՝ իր հիմնական աշխատավարձի 40 տոկոսի չափով։

Մեքենացված փոխադրության պլանը գերակատարելու դեպքում յերթևեկության հերթապահն ստանում է լրացուցիչ պարգև՝ պլանի գերակատարման յուրաքանչյուր տոկոսի համար իր ամսական աշխատավարձի 5 տոկոսի չափով։

21. Մեքենացված անտառակետի ավագ, հերթափոխային մեխանիկը և գարաժի վարիչը, մեքենացված փոխադրության ամսական պլանը կատարելու համար, յեթե նրանք կատարեն պլանային—նախազգուշական նորոգման գրաֆիկը, պահպանեն վերանորոգումների ժամկետները և լավ կատարեն նորոգման աշխատանքները, ստանում են պարգև՝ իրենց հիմնական աշխատավարձի 50 տոկոսի չափով։

Մեքենացված փոխադրության պլանը գերակատարելու դեպքում հերթափոխային ավագը, մեխանիկը և գարաժի վարիչը ստանում են լրացուցիչ պարգև՝ ամսական պլանի գերակատարման յուրաքանչյուր տոկոսի համար իրենց ամսական աշխատավարձի 5 տոկոսի չափով։

22. Յեռամսյակային պլանը կատարած անտառարդտնտեսության դիրեկտորը, տեխնիկական դեկավարը և անտառակետի պետը, յեթե նրանք կատարել են հիմնական սորտիմենտների առաջադրանքները, բացի հիմնական աշխատավարձից, դուրս տարված յուրաքանչյուր 2000 խորանարդ մետրի համար ստանում են պարգև 30 ռուբլու չափով, իսկ յեռամսյակային պլանից ավելի դուրս տարված յուրաքանչյուր

2000 խորանարդ մետրի համար պարգև են ստանում 50 ռուբլու չափով։

Ցեռամոյակային պլանը, այդ թվում նաև հիմնական սորտիմենտների գծով, կատարած մեքենացված անտառկետի պետը, տեխնիկական ղեկավարը, սպասարկության պետը, բացի հիմնական աշխատավարձից, դուրս տարված յուրաքանչյուր 1000 խորանարդ մետրի համար ստանում են պարգև 30 ռուբլու չափով, իսկ յեռամոյակային պլանից ավելի դուրս տարված յուրաքանչյուր 1000 խորանարդ մետրի համար պարգև են ստանում 50 ռուբլու չափով։

23. Անտառմթերումների մասնագետը, ցամաքային տրանսպորտի մասնագետը, յեթե անտառարդտնտեսությունը, մեքենացված անտառկետը կատարեն և գերակատարեն յեռամոյակային արտադրական պլանը թե քանակապես և թե հիմնական սորտիմենտներով, վաճառահանման (сбыт) վարիչը՝ յեթե կատարի բեռնելու պլանը, ինչպես նաև նրանց լավ աշխատանքի դեպքում, յուրաքանչյուրը, բացի իր հիմնական աշխատավարձից ստանում է պարգև՝ անտառարդտնտեսության դիրեկտորին կամ մեքենացված անտառկետի պետին վճարվելիք պարգևի 50 տոկոսի չափով։

24. Անտառարդտնտեսության, մեքենացված անտառկետի գլխավոր հաշվապահը, պլանովիկը և ֆինանսիստը, յեռամոյակային արտադրական պլանը կատարելու և գերակատարելու դեպքում և պլանային, ֆինանսական ու հաշվարկային—հաշվետու աշխատանքի լավ դրվածքի դեպքում, յուրաքանչյուրն ըստ իր աշխատանքի ստանում է պարգև՝ անտառարդտնտեսության դիրեկտորին կամ մեքենացված անտառկետի

պետին վճարվելիք պարգևի 20 տոկոսի չափով։

25. Անտառարդտնտեսությունների դիրեկտորներին ու տեխնիկական ղեկավարներին, մեքենացված անտառկետերի պետերին և մեքենացված անտառկետերի սպասարկությունների պետերին պարգևները տրվում են տրեստի կառավարչի կարգադրությամբ, իսկ մեքենացված անտառկետերի և անտառարդտնտեսությունների մնացած ինժեներ-տեխնիկական անձնակազմին ու վարպետներին պարգևները տրվում են անտառարդտնտեսության դիրեկտորի կամ մեքենացված անտառկետի պետի կարգադրությամբ։

26. Տրեստների կառավարիչներին իրավունք վերապահել՝ պարգևից զրկելու անտառարդտնտեսությունների այն դիրեկտորներին ու տեխնիկական ղեկավարներին, մեքենացված անտառկետերի այն պետերին, տեխնիկական ղեկավարներին և սպասարկությունների պետերին, որոնք թեև կատարել են արտադրական պլանը, բայց միջոցների գերածախս և անտնտեսավարություն են թույլ տվել։

27. Անտառարդտնտեսությունների դիրեկտորներին և մեքենացված անտառկետերի պետերին իրավունք վերապահել՝ աշխատավարձի յեռամոյակային խնայողության ֆոնդը, որն ստացվում է ձեռնարկության վարչական ապարատի կրճատման հետևանքով, 50 տոկոսի չափով հատկացնել աշխատակիցների այն խմբերի պարգևատրմանը, որոնց գծով կատարվել է հաստատված շտատների կրճատումը, և 25 տոկոսի չափով հատկացնել անտառարդտնտեսության և անտառկետի մյուս ինժեներա-տեխնիկական աշխատողների և ծառայողների պարգևատրմանը։

28. ԽՍՀՄ Անտառժողկոմատին, ՀՍԺԿ-ի ցոլեսին, ԾԱԺԿ-ի գլավլեսայաժպլրոմին և անտառանյութ մթերող բոլոր մյուս կազմակերպություններին՝ սույն թվի նոյեմբերի 1-ից գործող հրամանների մեջ մտցնել արտադրանքի նորմաների և աշխատանքի վարձատրության սիստեմի վերաբերյալ սույն վորոշմամբ նախատեսված բոլոր փոփոխությունները։

29. Միանգամայն անհանդուրժելի համարել այն պրակտիկան, յերբ առանձին կազմակերպություններ (ինքնամթերողներ) խախտում են տվյալ ռայոնում հիմնական անտառամթերողների համար սահմանված անտառամթերման գնահատումները։ Առաջարկել ԽՍՀՄ Դատախազին՝ քրեական պատասխանատվության կանչել, վորպես անտառամթերումները կազմալուծողներ, վոչ միայն գնահատումների խախտման անմիջական մեղավորներին, այլև, անհրաժեշտ դեպքերում, նաև հիմնարկների ղեկավարներին, վորոնց սնորհնության տակ են գտնվում այդ կազմակերպությունները (ինքնամթերողները)։

II. ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՑԵՎ, ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՑԻՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

30. Կոլտնտեսությունների հետ անտառամթերող կազմակերպությունների կնքած պայմանագրերում, այդ կազմակերպությունների միջոցներից հատկացումներ նախատեսել կոլտնտեսություններին՝ անտառամթերումների աշխատանքում սեզոնային պարգևհավելում ոտացած բոլոր կոլտնտեսականների աշխատավարձի 10 տոկոսի չափով։ Այդ հատկացումները

16649-58

տարածել նաև այն կոլտնտեսականների վաստակի վրա, վորոնք անտառարդյունաբերության մեջ կամ մեքենացված անտառակեսում կատարած առաջին տարվա աշխատանքի ընթացքում մտնում են անտառային բանվորների մշտական կադրերի կազմի մեջ։

Հատկացումները կատարվում են այն դեպքում, յերբ կոլտնտեսությունները կատարեն անտառամթերումների ու փոխադրումների համար բանվորներ առանձնացնելու պարտավորությունները։

31. Ի փոփոխություն գոյություն ունեցող կարգի (ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1937 թ. փետրվարի 16-ի վորոշումը), կոլտնտեսության ձիերով աշխատող սայլապաններին վարձատրել գործավարձային գնահատումներով, չմտցնելով դրա մեջ կոլտնտեսային ձիերի ոգտագործման վարձատրությունը։ Քաշելու և փոխադրության ժամանակ կոլտնտեսային ձիերն ոգտագործելու համար անտառամթերող կազմակերպությունները հատկացումներ պետք է կատարեն կոլտնտեսությանը՝ սայլապանի հիմնական գնահատումներով վաստակած 100 տոկոսի և արտադրանքի նորմաները դերակատարելու համար սայլապանի ստացած պրոգրեսիվ-հավելման 70 տոկոսի չափով։ Բացի դրանից, անտառամթերող կազմակերպությունները պետք է կոլտնտեսությանը վճարեն կոլտնտեսության ձիերով աշխատող սայլապանների սեզոնային պարգև-հավելման 20 տոկոսը։

32. Պարտավորեցնել ԽՍՀՄ Անտառժողկոմատին, ՀՍԺԿ-ի ՑՈԼԵՍ-ին և ԾԱԺԿ-ի Գլավլեսայաժպլրոմին՝ մշտական անասնաբուժական հսկողություն կազմա-

Հայկական ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна

կերպել կոլտնտեսականների՝ անտառանյութ վոխադրող ձիերի վրա։

33. Պարտավորեցնել կոլտնտեսությունների վարչություններին՝ ամեն որ ստուգել և հասարակական կարգով ապահովել կոլտնտեսականների ստանձնած պայմանագրային պարտավորությունների կատարումը, կիրառելով անտառմթերումների արտադրական տեղամասերը կոլտնտեսությունների լիազորներ ուղարկելու պրակտիկան։

III. ԱՆՏԱՌՄԹԵՐՈՒՄՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱՆ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ՑԵՎ ՄԵՔԵՆԱՑՎԱԾ ՏՐԱՆՍՊՈՐՏԸ ԳԱԶՈԳԵՆԵՐԱՏՈՐՆԵՐԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

34. Պարտավորեցնել ԽՍՀՄ Անտառժողկոմատին, ՀՇԺԿ-ի ՑՈԼԵՍ-ին, ԾԱԺԿ-ի Գլավլեստյաժպրոմին՝ 1939 թվին անտառմթերումն ամբողջությամբ կատարել աղեղնաձև սղոցով, վորը հեշտացնում է անտառահատի աշխատանքը և զգալիորեն բարձրացնում է նրա աշխատանքի արտադրողականությունը։

35. Պարտավորեցնել Ծանրարդյունաբերության ժողկոմատին (Գլավսպեցստալին).

ա) 1938 թվի նոյեմբերին և մինչև դեկտեմբերի 15-ը հիմնական անտառմթերողներին հանձնել 4-րդ յեռամսյակի ֆոնդերով հատանելիք բոլոր աղեղնասղոցները.

բ) 1939 թվի առաջին յեռամսյակում ապահովել Անտառժողկոմատին՝ 80 հազար, ՆԳԺԿ-ի ԳՈՒԼԱԳ-ին՝ 20 հազար, ԾԱԺԿ-ի Գլավլեստյաժպրոմին՝ 15 հազար և ՀՇԺԿ-ի ՑՈԼԵՍ-ին՝ 15 հազար աղեղնասղոց հանձնելը.

գ) բարձրացնել անտառահատ գործիքների—սղոցների և կացինների—վորակը, ԽՍՀՄ Մեքենաշինության Ժողկոմատի և Անտառժողկոմատի հետ միասին մինչև 1939 թ. հունվարի մեկը անտառահատ գործիքների գլխավոր տեսակների ընդհանուր միութենական ստանդարտ մշակել և այդ ստանդարտը ներկայացնել ԽՍՀՄ Ժողկոմխորհին կից Տնտխորհրդի հաստատությանը։

36. Պարտավորեցնել Մեքենաշինության Ժողկոմատին՝ 1938 թվի 4-րդ յեռամսյակում ԽՍՀՄ Անտառժողկոմատին հանձնել 1,6 միլիոն բարձր վորակի խարտոց, ՆԳԺԿ-ի ԳՈՒԼԱԳ-ին՝ 750 հազար հատ, ՀՇԺԿ-ի ՑՈԼԵՍ-ին՝ 500 հազար հատ, ԾԱԺԿ-ի Գլավլեստյաժպրոմին՝ 500 հազար հատ։

37. Անտառանյութի մթերման մեքենացումն ընդլայնելու նպատակով.—

ա) պարտավորեցնել Մեքենաշինության Ժողկոմատին՝ 1939 թվին կազմակերպել բենզին-մոտորային և էլեկտրական սղոցների սերիական արտադրություն.

բ) պարտավորեցնել Ծանր արդյունաբերության Ժողկոմատին՝ 1938 թվի 4-րդ յեռամսյակում ԽՍՀՄ Անտառժողկոմատին հանձնել մոտորային սղոցների 1000 սղոցաշղթա և 1939 թվին կազմակերպել բենզին-մոտորային և էլեկտրասղոցի բարելավված սղոցաշղթաների արտադրություն։

38. ԽՍՀՄ Ժողկոմխորհը և ՀԱՄԿ(բ)Կ Կենտկոմը անտառմթերումների մեքենացման առաջարկում կարևորագույն խնդիր են համարում՝ 1939 թվին անտառային արդյունաբերության ավտոտրակտորային

պարկը հիմնականում փոխադրել փայտանյութային վառելանյութի։

Այդ նպատակով ԽՍՀՄ Անտառժողկոմատին, ՆԳԺԿԻ-ԳՈՒԼԱԳ-ին, ՀՃԺԿ-ի ՑՈԼԵՍ-ին և ԾԱԺԿ-ի Գլավլեսայաժպրոմին պարտավորեցնել.—

ա) ՉՏԶ—60 մարկայի տրակտորները և ՉԻՍ ավտոմեքենաները 1939 թվի ընթացքում ամբողջությամբ փոխադրել փայտանյութային վառելանյութի.

ԽՍՀՄ Անտառժողկոմատի գծով	2300	տրակտոր	և 1000 ավտո.
ԾԱԺԿ-ի Գլավլեսայաժպրոմի գծով	200	»	և 400 »
ՀՃԺԿ-ի ՑՈԼԵՍ-ի գծով	120	»	և 400 »

բ) մինչև 1938 թվի դեկտեմբերի 1-ը ԽՍՀՄ ԺԿԽ-ին կից Տնտխորհրդին ներկայացնել՝ ավտոտրակտորային պարկը հեղուկ վառելանյութից փայտանյութային վառելանյութի փոխադրումն ապահովող միջոցառումների պլանը, վարողների և մեխանիկների կադրեր պատրաստելու պլանը և գազոգեներատորային վառելանյութի մեքենայական մթերման ու չորացման սարքավորումների տիպային կոնստրուկցիաները.

գ) բոլոր գազոգեներատորային բաղաներում կազմակերպել վառելանյութային-մթերման կետեր՝ ամառային շրջանում փայտանյութային վառելանյութ մթերելու համար և մինչև 1939 թվի սեպտեմբերի 1-ն ապահովել բնականից չորացված վառելանյութի վոչ պակաս քան տասնամսյա պաշար, ինչպես նաև ամենապարզ տիպի չորանոցներ կառուցել։

39. Պարտավորացնել Մեքենաշինության ժողկոմատին՝ ԽՍՀՄ ժողկոմխորհի 1938 թ. փետրվարի

28-ի և Տնտխորհրդի 1938 թվի մայիսի 26-ի վորոշման համաձայն, ս. թ. 4-րդ յեռամսյակում լիովին բավարարել անտառմթերող կազմակերպությունների շահագործման մեջ դտնվող գազոգեներատորային տրակտորների և ավտոմեքենաների պահեստի մասերի պահանջը։

40. Մեքենաշինության ժողկոմատին՝ վոչ ուշ քան 1939 թ. մարտի 1-ը, պատրաստել և ԽՍՀՄ Անտառժողկոմատի հետ միասին փորձարկել փայտի ածուխով աշխատող տրակտորային գազոգեներատորը։

41. Պարտավորեցնել Մեքենաշինության ժողկոմատին 1939 թ. պատրաստել.—

ա) ՉՏԶ—60 գազային շարժիչի մոտորային խմբի դետալների կոմպլեկտներ և դրանք անտառմթերող կազմակերպություններին հանձնել հետևյալ ժամկետներին.—

1939 թ.	ԽՍՀՄ Անտառժողկոմատին	ՀՃԺԿ-ի ՑՈԼԵՍ-ին	ԾԱԺԿ-ի Գլավլեսայաժպրոմին
I յեռամսյակ	500	25	25
II յեռամսյակ	1000	40	75
III յեռամսյակ	800	55	100

բ) 1620 հատ ЛС-1-3 գազոգեներատորային սարքեր ՉՏԶ-60 տրակտորների համար, պահեստի մասերի ինդիվիդուալ կոմպլեկտով, այդ թվում ԽՍՀՄ Անտառժողկոմատի համար—1300 հատ, ՀՃԺԿ-ի ՑՈԼԵՍ-ի համար—120 հատ, ԾԱԺԿ-ի Գլավլեսայաժպրոմի համար—200 հատ.

գ) ՉԻՍ-21 գազոգեներատորային սարքեր՝ պահեստի մասերի ինդիվիդուալ լրիվ կոմպլեկտով և հեղուկ վառելանյութով աշխատող ավտոմեքենաները գազո-

գեներատորային վերաբարքավորելու համար անհրաժեշտ բոլոր դետալներով, և դրանք անտառմթերող կազմակերպություններին ուղարկել հետևյալ ժամկետներին.—

	ԽՍՀՄ Անտառ-ժողկոմատին	ՀՃԺԿ-ի ՑՈԼԵՍ-ին	ԾԱԺԿ-ի գլավլեստյաժպրոմին
I յեռամսյակ	300	190	50
II յեռամսյակ	300	200	175
II յեռամսյակ	400	100	175

դ) պահեստի մասեր, ներառյալ ЛС-1-3 տիպի գազոգեներատորային սարքերի կրակարաններ, Անտառ-ժողկոմատին՝ 1800 հազար ռուբլու, ՀՃԺԿ-ի ՑՈԼԵՍ-ին՝ 140 հազար ռուբլու, ԾԱԺԿ-ի Գլավլեստյաժպրոմին՝ 240 հազար ռուբլու, հավասարաչափ ուղարկելով 1939 թվի յեռամսյակներին, սպառողների սպեցիֆիկացիայով.

ե) մեքենական ճեղքիչներ (կացիններ) և ՑԲ մարկայի էլեկտրոմոտոռավոր ճոճանաղոցներ, գազոգեներատորային ավտոտրակտորային պարկի վառելանյութի մթերման բաղաները սարքավորելու համար, ուղարկելով դրանք վոչ ուշ քան 1939 թվի հունիսի 1-ը։

	Ճեղքիչներ (կացիններ)	Էլեկտրոմոտոռավոր ճոճանաղոցներ
ԽՍՀՄ Անտառժողկոմատին	200	900
ՆԳԺԿ-ի ԳՈՒԼԱԳ-ին	100	200
ՀՃԺԿ-ի ՑՈԼԵՍ-ին	50	100
ԾԱԺԿ-ի Գլավլեստյաժպրոմին	80	160

42. Մեքենաշինության ժողկոմատին՝ ՆԳԺԿ-ի ԳՈՒԼԱԳ-ի համար պատրաստել մոտորային խմբի

դետալների կոմպլեկտներ՝ ՁԻՍ-5 մեքենաները պինդ վառելանյութի փոխադրելու համար։

1938 թ. 4-րդ յեռամսյակում	400 կոմպլեկտ
1939 թ. I յեռամսյակում	500 »
1939 թ. II »	1000 »
1939 թ. III »	1000 »
1939 թ. IV »	1000 »

43. ԽՍՀՄ Անտառժողկոմատին՝ լիովին բեռնել Ոնեգայի գործարանը և պատրաստել գազոգեներատորային սարքի 1000 կոմպլեկտ, դրանցից 1939 թվի I յեռամսյակում—300, II յեռամսյակում—300 և III յեռամսյակում—400։

44. Անտառժողկոմատին, մեքենացված անտառակետերի և անտառարդտնտեսություններին ավտոտրակտորային պարկը արագ կերպով հեղուկ վառելանյութից փայտանյութի փոխադրելու համար թույլ տալ.—

ա) ձեռնարկության դիրեկտորային ֆոնդին հանձնել 1938 և 1939 թվերին պինդ վառելանյութի անցնելուց ստացված ամբողջ խնայողությունը։

բ) գազոգեներատորային մեքենաները վարողների աշխատանքը 15 տոկոսով բարձր վարձատրել հեղուկ վառելանյութով աշխատող մեքենաների վարողների համեմատությամբ։

գ) գազոգեներատորային պարկի մեխանիկների աշխատանքը, հեղուկ վառելանյութով աշխատող մեքենաների մեխանիկների համեմատությամբ, վարձատրել 15 տոկոսով բարձր։

45. Պարտավորեցնել ԽՍՀՄ Անտառժողկոմատին, ԾԱԺԿ-ի Գլավլեստյաժպրոմին, ՀՃԺԿ-ի ՑՈԼԵՍ-ին և

և ՆԳԺԿ-ի ԳՈՒԼԱԳ-ին՝ մինչև 1939 թվի հունվարի 1-ը ԽՍՀՄ ԺԿԽ-ին կից Տնտխորհրդին ներկայացնել թեթևացված լայնուղի և նեղուղի (դեկավիլյան) ճանապարհների շինարարության, ռեկոնստրուկցիայի և 1939 ու 1940 թվերին շահագործման հանձնելու պլանը, այն հաշվով, որպեսզի ռելսային փոխադրումների տեսակարար կշիռն զգալապես բարձրացվի մեքենացված անտառտրանսպորտում։

Պարտավորեցնել Մեքենաշինության ժողկոմատին՝ ընդարձակել շոգեքարշերի, մոտոքարշերի և պլատֆորմների արտադրությունը փայտատար նեղուղի երկաթուղիների համար, այնպիսի հաշվով, որպեսզի 1939 թվին բավարարվի հիմնական անտառմթերողների պահանջը։

Ծանր արդյունաբերության ժողկոմատին՝ ապահովել անտառմթերող կազմակերպությունների համար թեթև տիպի ռելսերի արտադրությունը (մետրը 6-ից 11 կիլոգրամ)՝ զոդիչներով և սլաքային փոխանցումներով։

46. 1939 թվի I յեռամսյակում ԾԱԺԿ-ի գործարաններում կազմակերպել դեկավիլյան ուղիների պատրաստումը։

Առաջարկել Անտառժողկոմատին՝ ԾԱԺԿ-ի հետ միասին, մինչև 1938 թվի դեկտեմբերի 15-ը ներկայացնել այդ ուղիների 1939 թվի արտադրության պլանը։

47. Մեքենացված ուղիներում բեռնման աշխատանքները մեքենացնելու համար պարտավորեցնել ԾԱԺԿ-ի Կովրովի գործարանին՝ 1939 թվին յուրացնել գազոգեներատորային տրակտորային շարժիչով

աշխատող հինգ տոննանոց թրթռուռավոր կռունկների (կրանների) փորձնական արտադրությունը և 1939 թվի II յեռամսյակում Անտառժողկոմատի համար պատրաստել 5 կռունկ։ Անտառժողկոմատի հետ միասին փորձարկել կռունկները, վորից հետո վճռել դրանց պատրաստման հետագա ծրագրի հարցը։

48. Պարտավորեցնել ԽՍՀՄ Անտառժողկոմատին և մյուս անտառմթերող կազմակերպություններին՝ 1939 թվի առաջին յեռամսյակում ռացիոնալացված և բարելավված սայլային փայտատար ճանապարհներով փոխադրումը հասցնել սայլային փոխադրումների ընդհանուր ծավալի 70 տոկոսին։

Անտառարդյունաբերություններին և անտառկետերին՝ լայնորեն կիրառել ամերիկյան տիպի փայտատար սահնակները, քաշող «յումպարի» կիսասահնակները, կցորդ քեղիները (քաշանները) և արմատացնել փայտանյութի բազմակոմպլեկտ սայլային փոխադրումը սառցապատ ճանապարհներով։

Պարտավորեցնել անտառմթերողներին՝ ձիաքարշ փոխադրումների արտադրողականությունը բարձրացնելու համար լայնորեն կիրառել թեթևացված դեկավիլյան ուղիների և գերանային ուղիների շինարարությունը, առանձնապես ճահճակալած անտառային մասսիվներում։

49. Առաջարկել Մեքենաշինության ժողկոմատին (անտառ-թղթի մեքենաշինության Գլխավոր վարչությանը) մինչև սույն թվի դեկտեմբերի 1-ը միջոցառումներ մշակել անտառմթերող կազմակերպություններին անհրաժեշտ սարքավորումների արտադրությունն ավելացնելու համար։

ԽՍՀՄ Անտառժողկոմատին՝ 1939 թվի պլանում նախատեսել իր անտառ-մեքենաշինական գործարանների ընդարձակումն ու վերակառուցումը։

50. ԽՍՀՄ Անտառժողկոմատին՝ 1939 թվի պլանում նախատեսել վերանորոգման կենտրոնական արհեստանոցների ցանցի ընդարձակումը, որոնք ապահովեն Անտառժողկոմատի փայտատար մեքենաների ամբողջ պարկի կապիտալ նորոգումը։

IV. ԱՆՏԱՌՄԹԵՐՄԱՆ ԿԵՏԵՐԻ ԱՌԵՎՏՐԻ ՑԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍՆՆԴԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

51. Պարտավորեցնել ԽՍՀՄ Թեթև արդյունաբերության, Սննդի արդյունաբերության, Ծանր արդյունաբերության և Առևտրի ժողկոմատներին՝ վոչ ուշ քան 1938 թվի նոյեմբերի 25-ը լրացնել II և III յեռամսյակների արդյունաբերական ու պարենային ապրանքների պակասը և ապահովել IV յեռամսյակում ապրանքների հավասարաչափ ուղարկումը անտառային կազմակերպություններին։

ԽՍՀՄ ԺԿԽ-ին կից Տնտխորհրդի սեղերվի հաշվին ԽՍՀՄ Անտառժողկոմատի համար 1938 թվի IV յեռամսյակում առանձնացնել լրացուցիչ 2 միլիոն ռուբլու բամբակեղեն գործվածքներ՝ անտառային բանվորների հանրակացարանների անկողինների սարքավորման համար։

52. Պարտավորեցնել ԽՍՀՄ Անտառժողկոմատին, ՀՇԺԿ-ի ՑՈԼԵՍ-ին, ԾԱԺԿ-ի Գլավլեստյաժպրոմին ու ԽՍՀՄ Առևտրի ժողկոմատին՝ հսկողություն սահմանել, վոր մարզերում ապրանքները կանոնավոր ուղարկվեն անտառամթերումների վայրերը և դրանք ոգտագործվեն ճիշտ նպատակին։ Անտառամթերումների տեղամասերում առևտուր կազմակերպել անտառահատների համար հարմար ժամերին։

53. ԽՍՀՄ Անտառժողկոմատին, ՀՇԺԿ-ի ՑՈԼԵՍ-ին, Սոյուզտրանստորգպլիտի հետ միասին, և ԾԱԺԿ-ի Գլավլեստյաժպրոմին՝ 1938 թվի դեկտեմբերից անմիջականորեն անտառամթերումների տեղամասերում շրջիկ առևտուր կազմակերպել ֆուրգոններով ու սահնակներով, ԽՍՀՄ Անտառժողկոմատի գծով—1500 փոխադրամիջոցով, ՀՇԺԿ-ի ՑՈԼԵՍ-ի գծով—750, և ԾԱԺԿ-ի Գլավլեստյաժպրոմի գծով—500։

54. Տարածել ԾԱԺԿ-ի Գլավլեստյաժպրոմի և ՀՇԺԿ-ի ՑՈԼԵՍ-ի անտառանյութ վաճառող կազմակերպությունների վրա՝ ԽՍՀՄ Անտառժողկոմատի Սոյուզլեսպրոդտորգի համար ընդունված կենտրոնացված նպատակային ֆոնդերի կարգը։

55. Անտառամթերող կազմակերպությունների առևտրական ցանցին՝ կանոնավորել անտառահատներին տաք կերակրով սպասարկելու գործը վոչ միայն գոյություն ունեցող ճաշարանների միջոցով, այլև շարժական խոհանոցների, խրճիթ-խոհանոցների և կաթսայակեռների կազմակերպմամբ՝ անմիջականորեն արտադրական տեղամասում։

Ավելացնել հացեղեն-բուլկեղենի թխումը, ընդլայնել նրանց սորտիմենտը և ապահովել դրանց ժամանակին փոխադրումը աշխատանքի վայրերն ու բանվորների հանրակացարանները՝ շրջիկ առևտրի ցանցի միջոցով։

56. Թեյարաններ կազմակերպել անտառամաս-

ռում, այդ նպատակի համար, բացի ճաշարանների գոյություն ունեցող ցանցից, հարմարեցնել նաև ժամանակավոր տիպի շենքեր։

57. ԽՍՀՄ Անտառժողկոմատին՝ գործնական միջոցներ ձեռք առնել, որոնք ապահովեն Սոյուզլեսպրոդտորգի սիստեմի առևտրական կազմակերպությունների փոխադրումը տնտեսաշվարկի։ Վճռական պայքար մղել այդ կազմակերպությունների չարչիական պրակտիկայի դեմ, որոնք ուղղված շահույթների հետևից ընկնելով հաճախ մոռանում են իրենց անմիջական խնդիրը—կազմակերպել անտառարդտնտեսությունների և մեքենացված անտառակետերի անտառահատների, տրակտորիստների, ինժեներների, տեխնիկների և մյուս աշխատողների կանոնավոր սպասարկումը։

V. ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՑԵՎ ԿՈՒՍ-ՄԱՍՍԱՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

58. Պարտավորեցնել ԽՍՀՄ Անտառժողկոմատին և ԾԱԺԿ-ի Գլավլեստյաժպրոմին՝ ապահովել, որ ԽՍՀՄ ԺԿԽ-ի 1937 թվի փետրվարի 16-ի ու սեպտեմբերի 29-ի որոշումների համաձայն, անտառմթերումների մշտական բանվորների թիվը 1938 թվին հասցվի—Անտառժողկոմատի գծով մինչև 260 հազար հոգու, և ԾԱԺԿ-ի Գլավլեստյաժպրոմի գծով 40 հազար հոգու։

59. Անտառային բանվորների մշտական կադրեր ամրացնելու և նրանց բնակարանով ու կուլտ-կենցաղային սպասարկմամբ ապահովելու նպատակով անտառմթերող կազմակերպություններին պարտավորեցնել՝ 1938 թվի IV եռամսյակում շահագործման հանձնել նոր բնակարաններ.—

ԽՍՀՄ Անտառժողկոմատի Գլավսևլեսի գծով	32	հազար	քառ.	մետր
» » Գլավսեզալլեսի գծով	37	»	»	»
» » Գլավվոստլեսի գծով	29	»	»	»
» » Գլավզապսիբլեսի գծով	21	»	»	»
» » Գլավվոստսիբգալլեսի գծով	38	»	»	»
ՌԽՖՍՀ Անտառժողկոմատի գծով	18	»	»	»
ՀՍԺԿ-ի ՑՈՂԵՍ-ի գծով	13	»	»	»
ԾԱԺԿ-ի Գլավլեստյաժպրոմի գծով	40	»	»	»

60. Պարտավորեցնել ԽՍՀՄ Անտառժողկոմատին՝ 200-ից 400 մշտական բանվոր ունեցող անտառարդտնտեսություններում և մեքենացված անտառակետերում կազմակերպել ֆելդշերական կետեր, 400-ից 500 բանվոր ունեցողներում՝ բժշկական կետեր, իսկ 500 ավելի ունեցողներում՝ հիվանդանոցային—ամբուլատորային կետեր։

61. Ժողկոմխորհին կից Համամիութենական Ռադիոկոմիտեին՝ գործնական ոգնություն ցույց տալ պրոֆմիութենական և կուլտակցական կազմակերպություններին՝ անտառմթերումների բանվորների կուլտ սպասարկումը բարելավելու, ակումբները, կարմիր անկյունները և հանրակացարանները ռադիոֆիկացիայի յենթարկելու համար, մինչև 1939 թվի հունվարի 1-ը հաշվետվություն ներկայացնելով ԽՍՀՄ Ժողկոմխորհին ձեռք առած միջոցների մասին։

Պարտավորեցնել ԽՍՀՄ Ժողկոմխորհին կից կինեմատոգրաֆիայի գործերի կոմիտեին՝ անտառ-լաս-

տագնաց բանվորների պրոֆմիությունի ԿԿ-ի տրամադրության տակ դնել 150 հատ հնչուն շրջիկ ավտո-կինո՝ անտառարդյունաբերություններին, անտառկեսերին և անտառարդյունաբերության տեղամասերին սպասարկելու համար։

62. Միութենական հանրապետությունների Լուսժողկոմատներին և ՀԱՄԿԽ-ին՝ միջոցներ ձեռք առնել մինչև 1938 թվի դեկտեմբերի 1-ը անտառմթերող կազմակերպությունների բանվորների, ծառայողների և ինժեներա-տեխնիկական աշխատողների յերեխաների դպրոցական սպասարկման գործը բարելավելու։

63. Անտառմթերող կազմակերպություններին՝ ավելի համարձակ կերպով ներգրավել կանանց անտառարդյունաբերական աշխատանքներում վորպես շոֆերներ, տրակտորիստներ, անտառահատներ՝ անհրաժեշտ պայմաններ ստեղծելով նրանց վորակավորումը բարձրացնելու համար։ Անտառարդյունաբերությունների և մեքենացված անտառակեսերի բանվորների, ծառայողների, ինժեներների ու տեխնիկների կանանց լայնորեն ներգրավել վորպես հաշվետարներ, ընդունողներ, պահեստապետներ և այլն։

Պարտավորեցնել ԽՍՀՄ Անտառժողկոմատին, ՀՇԺԿ-ի ՑՈԼԵՍ-ին, ԾԱԺԿ-ի Գլավլեսոյաժպրոմին և Առժողկոմատին՝ անտառարդյունաբերություններում և մեքենացված անտառակեսերում, մասուրային տարիքի ավելի քան 25 յերեխա լինելու դեպքում, կազմակերպել մանկամասուրներ։

64. Պարտավորեցնել անտառմթերող կազմակերպություններին՝ յուրաքանչյուր անտառարդյունաբերության մեջ, մեքենացված անտառակեսում և անտառմթերման տեղամասում մտցնել ներքին կարգ ու կանոնի որենքներ, աշխատանքի գրաֆիկ և աշխատանքի ներկայանալու տաբել։

65. 200 խոշոր անտառարդյունաբերությունների և մեքենացված անտառակեսերում լրացուցիչ կերպով սահմանել մարզկոմների, յերկրկոմների և ազգային կոմկուսների կենտկոմների՝ ՀԱՄԿ(բ)Կ կենտկոմի կողմից հաստատված կուսկազմակերպիչների պաշտոններ։

Պարտավորեցնել ՀԱՄԿ(բ)Կ Արխանգելսկի, Բաշկիրիայի, Վոլոգդայի, Իրկուտսկի, Կիրովի, Կարելիայի, Լենինգրադի, Մարիական, Նովոսիբիրսկի, Պերմի, Սվերդլովի, Չիտայի, Սմոլենսկի, Թաթարիայի, Ուդմուրդական, Չելյաբինսկի, Գորկու, Զուվաշիայի, Կույբիշևի, Կուրսկի, Տամբովի, Վորոնեժի, Յարոսլավլի, Իվանովի, Կալինինի, Ռյազանի, Մոսկվայի մարզկոմներին, ՀԱՄԿ(բ)Կ Ալտայի, Կրասնոյարսկի, Կրասնոդարի, Որջոնիկիձեյի, Խաբարովսկի և Պրիմորյեյի յերկրկոմներին, Ուկրաինայի Կ(բ)Կ կենտկոմին և Բելոռուսիայի Կ(բ)Կ կենտկոմին՝ մինչև 1938 թվի դեկտեմբերի 15-ը ՀԱՄԿ(բ)Կ կենտկոմի հաստատությանը ներկայացնել այն անտառարդյունաբերությունների և մեքենացված անտառակեսերի կուսկազմակերպիչների թեկնածությունները, վորտեղ լրացուցիչ կերպով սահմանվում են այդ պաշտոնները։

Մարզկոմների, յերկրկոմների և ազգային կոմկուսների կենտկոմների քարտուղարներին՝ անձամբ ծանոթանալ անտառարդյունաբերության և մեքենացված անտառակեսի յուրաքանչյուր կուսկազմակերպչի հետ

և նրանց սիստեմատիկ ոգնություն ցույց տալ գործնական աշխատանքում։

66. Անտառկետերում և արտադրական անտառատեղամասերում, վորտեղ կա Համկ(բ)կ յերեք անդամից ավելին, ստեղծել կուսխմբակներ։ Համկ(բ)կ յերեք անդամից պակաս ունեցող անտառկետերում ստեղծել կուս-կոմյերիտական խմբակներ՝ Համկ(բ)կ ռայոնական կոմիտեյի հաստատած կուսկազմակերպչի գլխավորությամբ։ Կոմյերիմիության ռայոնական կոմիտեների կարևորագույն խնդիրը համարել՝ կոմյերիտական խմբակներ ստեղծել յուրաքանչյուր անտառկետում և արտադրական խոշոր անտառատեղամասում։

Ուժեղացնել անտառարդյունաբերություններում և մեքենացված անտառկետերում անմիջականորեն աշխատող առաջավոր բանվորների և ինժեներ-տեխնիկական աշխատողների ներգրավումը կուսակցության մեջ և համակրողների խմբակներում։

67. Հիմնել ԽՍՀՄ Անտառժողկոմատի և անտառարդյունաբերության բանվորների պրոֆմիության Կենտկոմի փոխանցիկ Կարմիր Դրոշ։

Առաջարկել տնտեսական, կուսակցական և պրոֆմիութենական կազմակերպություններին՝ լայնորեն ծավալել սոցիալիստական մրցությունը՝ արտադրանքի նորմաների յուրացման և գերակատարման, արտադրական լավագույն անտառատեղամասի, անտառարդյունաբերության, մեքենացված անտառկետի համար, ինչպես նաև փոխանցիկ Կարմիր Դրոշն ստանալու իրավունքի և «Անտառարդյունաբերության պատվավոր աշխատողին» կրծքանշանով պարգևատրելու համար։

Ընդլայնել առանձին պրոֆեսիաների բանվորների—անտառահատների, սայլապանների, տրակտորիստների, վարպետների արտադրական խորհրդակցություններ հրավիրելու պրակտիկան։

* * *

ԽՍՀՄ Ժողկոմխորհը և Համկ(բ)կ Կենտկոմը հաստատ հավատացած են, վոր անտառամթերման արդյունաբերության բանվորները, ծառայողները, ինժեներա-տեխնիկական աշխատողները և անտեսավարները, կուսակցական և խորհրդային կազմակերպությունների ղեկավարությամբ, արագ կերպով կհաղթահարեն այդ արդյունաբերության հետամնացությունը և այս վորոշման հիման վրա լիովին կապահովեն անտառանյութի մթերման ու փոխադրության պետական պլանի կատարումը։

ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահ՝

Վ. ՄՈԼՈՏՈՎ

Համկ(բ)կ Կենտրոնական Կոմիտեյի քարտուղար՝

Ի. ՍՏԱԼԻՆ

Մոսկվա, Կրեմլ, 15 նոյեմբերի 1938 թ.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Հ. Հովհաննիսյանի անվան

Գլավլիտի լիցեզիա՝ Ե. 2221. Հրատ. 1947.
Պատվեր 567. Տիրաժ 1000
Պետհրատի 1 տպարան, Ցերետելի, Լենինի 65.

ՀՀ Ազգային գրադարան
NL0289829

349
304
20433

Об улучшении работы лесозаготовительной промышленности СССР

Гиз Арм. ССР, Ереван, 1939 г.